

ՊԱՇՏՈՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ

ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ

Բիզնես գործընթացների կառավարման բաժնի
գլխավոր մասնագետ

Լրիվ դրույք

ք. Երևան, ՀՀ

Հնարավորինս շուտ

09/12/2022

Անորոշ

«Այդի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է բանկային պրոդուկտների մատուցման և բիզնես գործընթացների նախագծման նոր մոտեցումներ ներդնելուն պատրաստ թիմի անդամի, ով պատասխանատու է լինելու ստորև նշված պարտականությունները կատարելու համար.

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Պրոդուկտներին և ծառայություններին առնվող բիզնես գործընթացների գույքագրում, քարտեզագրում և բարելավման առաջարկների ներկայացում,
- Հետգործառնական սպասարկման բիզնես գործընթացների գույքագրում, քարտեզագրում և դրանց օպտիմալացման առաջարկների մշակում,
- Բիզնես գործընթացների թվայնացմանն ուղղված նախագծերի շրջանակներում գործընթացների ուսումնասիրություն և առաջարկների ներկայացում:

ՊԱՅԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն
- Բիզնես գործընթացների նախագծման փորձ
- Նախագծերի կառավարման փորձ, PMP սերտիֆիկատի առկայություն կոնիտարկվի որպես առավելություն
- Բանկային համակարգում աշխատանքային փորձը կոնիտարկվի որպես առավելություն
- Բանկային գործընթացների, պրոդուկտների և ծառայությունների իմացություն
- Բանկային օրենսդրության իմացություն
- Համակարգչային գիտելիքներ՝ MS office: Word, Excel, Power Point
- LSoft ծրագրով աշխատելու փորձը կոնիտարկվի որպես առավելություն
- Հայերեն և ռուսերեն լեզուների՝ գերազանց, անգլերեն լեզվի լավ իմացություն
- Հաղորդակցման և թիմում աշխատելու հմտություններ
- Աշխատանքի ճիշտ կազմակերպման և ժամանակի կառավարման հմտություններ
- Խնդիրների արագ ու արդյունավետ լուծման կարողություններ
- Միաժամանակ մի քանի առաջադրանք կատարելու ունակություն
- ճշտապահություն և պատասխանատվության զգացողություն
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե ձեր գիտելիքները, մասնագիտական փորձն և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և դուք հետաքրքրված եք միանալու Այրի Բանկի թիմին, խնդրում ենք լրացնել հայտարարությանը կից ներկայացված դիմում-հայտը և այն ուղարկել hr@idbank.am էլ.փոստի հասցեին՝ մինչև հայտարարության վերջնաժամկետը՝ վերնագիր (subject) տողում պարտադիր նշելով հաստիքի անվանումը: Հարցազրույցի կիրավիրվեն նախնական ընտրությունը անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Այրի Բանկը» հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «Այրի Բանկ» անվանումով: Այրի Բանկի առաքելություն է լինել առաջին ընտրության Բանկ հաճախորդների համար որպես լավագույն նորարար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքը <https://www.idbank.am/>: